ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ՝ *Լ.Մուրադյանի*
Գ.Գաբրիելյանի
Մ.Քարտաշյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ *Փ.Կարապետյանի*

ՀՀ Արմավիրի մարզի ՋՕԸ-ների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2017 թվականի փետրվարի 21-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Ա.Ղահրամանյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

2.Գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման ընթացքի մասին

/Ա.Այվազյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի շխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

Օրակարգային առաջին հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը մարզի խորհրդի նիստի մասնակիցների հաստատմանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2017 թվականի փետրվարի 21-ի նիստի օրակարգը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.10 –րդ կետի 13-րդ պարբերությամբ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2017 թվականի փետրվարի 21-ի նիստի օրակարգը:

ցանցերի մաքրման աշխատանքները ժամանակին սկսելու և ավարտելու համար: *Մարզպետն անդրադարձավ նաև մարզին հատկացվող պարարտանյութի և գարու ցերմացուի չափաքանակներին,նշելով որ դրանք կտրամադրվեն միայն նախապես վճարման պայմանով:*

Օրակարգային հարցերի քննարկման ու ամփոփման ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**

Արձ.՝ Մ.Առուշանյան

Օրակարգային երկրորդ հարցի կապակցությամբ՝ գարնան գյուղատնտեսական աշխատանքերի նախապատրաստման ընթացքի մասին զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը:Նա մասնավորապես նշեց,որ ՀՀ Արմավիրի մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման ուղղությամբ մարզպետարանը, մարզի համայնքները, ջրօգտագործողների ընկերությունները և տնտեսվարող գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները և ֆերմերները սկսել են աշխատանքներ տանել դեռևս 2016 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներից: Ա. Այվազյանը կարևորելով մարզում գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման գործընթացում ոռոգման համակարգերի մաքրման և վերանորոգման աշխատանքների իրականացումը՝ առաջարկեց մարզի ոռոգման համակարգը սպասարկողներին և ջրօգտագործողներին համագործակցված, առավել կազմակերպված և բարեխղճորեն կատարելու համակարգի կառուցման, մաքրման և վերանորոգման աշխատանքները, որպեսզի հնարավոր լինի արդյունավետ օգտագործել ոռոգման ջուրը և կորուստները հասցվեն մինիմումի: Նա նշեց նաև,որ ընթացքում մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության աշխատակիցների կողմից կուսումնասիրվեն կատարվող աշխատանքների ընթացքը և արդյունքները կներկայացվեն ՀՀ Արմավիրի մարզպետին: Ա,Այվազյանը իր խոսքում ընդգծեց նաև, որ ընթացիկ տարում նույնպես շարունակվելու են ՀՀ կառավարության կողմից գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման նպատակով տրամադրվող աջակցության ծրագրերը, որոնց շրջանակում շուկայականից մատչելի գնով մարզին կհատկացվի 6000 տոննա ազոտական պարարտանյութ՝ 1 պարկը 6000 դրամով, 200-ական տոննա ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր՝ 1 պարկը 7000 դրամով: Գարնանացանի աշխատանքները խթանելու նպատակով մարզին կհատկացվի նաև 20 տոննա գարնանացան գարու սերմացու, որի պահանջարկը ձևավորվել է համայնքների կողմից ներկայացված հայտերի հիման վրա:

Անդրադառնալով օրակարգային երկրորդ հարցի կապակցությամբ ներկայացված ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանի զեկույցին,**ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը առաջարկեց Արմավիրի մարզի ՋՕԸ-ների տնօրեններին՝ ակտիվ աշխատանքներ տանել սպասարկման տարածքի ոռոգման**